

ՏՈՒՇԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ և ԳԵՎՈՐԳ ՏԵՓԱՆՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ/ԷԿՈԿԵՆՏՐՈՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՄԲԻՈՆ



2019թ. մայիսի 17-ին Տուշայի համալսարանում (Վիտերբո, Իտալիա) տեղեկատվական օր էր՝ նվիրված Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Հայաստանի և Վրաստանի համալսարանների հետ հաջողված համագործակցության պատմությանը:

Տեղեկատվական օրվա ընթացքում ա.գ.թ. Լիլիթ Սահակյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի (Էկոկենտրոն) հետազոտությունները, ինչպես նաև Էկոկենտրոնի և ԳԿՄԿ համատեղ ամբիոնի ուսումնակրթական գործունեությունը:

Այնուհետև, հաջորդ օրերի ընթացքում Լիլիթ Սահակյանը և Գևորգ Տեփանոսյանը այցելեցին իրենց մասնագիտական ուղղվածությանը հատուկ մի շարք դեպարտամենտներ և լաբորատորիաներ Տուշայի համալսարանում, մասնավորապես՝

- Հողերի ֆիզիկայի լաբորատորիա, որն իրականացնում է հողերի ֆիզիկական հատկությունների որոշում: Ծանոթացել են հողերի հատիկային կազմի (տեքստուրա) որոշման նպատակով հողի նմուշառման համար օգտագործվող դաշտային պարագաներին, հողերի հատակային կազմի որոշման համար կատարվող նախապատրաստական աշխատանքների առանձնահատկություններին, հողի առանձին ֆրակցիաների տարրանջատման մեթոդներին և սարքեր-սարքավորումներին:

- Նանումասնիկների կենսաաֆիզիկայի կենտրոնում՝ նանումասնիկների լաբորատորիայում, մասնագետները ծանոթացել են նանումասնիկային մակարդակում նյութերի տարատիպ հատկությունների ուսումնասիրությանը և նյութի մակերևույթի սկանավորման համար կիրառվող սարքավորումներին՝ տարատեսակ մանրադիտակներին, քննարկել այդ սարքավորումների կիրառության պոտենցիալ հնարավորությունները բնապահպանական հետազոտություններում:
- Մայիսի 21-ին Լիլիթ Սահակյանը և Գևորգ Տեփանոսյանը, որոնք պատասխանատու են «Շրջակա միջավայրի երկրաքիմիա» և «Շրջակա միջավայրի վիճակագրություն» դասընթացների մշակման և արդիականացման համար, այցելեցին Իտալիայի ազգային հետազոտական խորհուրդ՝ երկրի էկոհամակարգերի հետազոտական ինստիտուտ, որտեղ MENVIPRO ծրագրում ընդգրկված աշխատակազմի հետ քննարկեցին ծրագրի ընթացիկ գործողությունները՝ ներառյալ դասընթացների համեմատական վերլուծությունը, հաջորդ հանդիպման թեմաները, ինչպես նաև քննարկեցին հետագա համագործակցության հնարավորություններն ու թեմաները:
- Կենսաբանության, կենսապարենային և անտառային համակարգերի նորարարությունների դեպարտամենտ այցի շրջանակներում Լիլիթ Սահակյանը և Գևորգ Տեփանոսյանը պրոֆեսոր Սառա Մարինարիի հետ քննարկել են ասպիրանտ Գայանե Մելքոնյանի /գիտական ղեկավար՝ Լիլիթ Սահակյան/ նույն բաժին եռամսյա ուսումնական այցի ժամանակ իրականացված ուսումնահետազոտական աշխատանքների արդյունքները, քննարկել ստացված տվյալների կարևորությունը և համատեղ հոդվածի տպագրության հնարավորությունները: Քննարկվել է նաև MENVIPRO ծրագրի շրջանակներում վերոնշյալ բաժնի մասնագետների հետ համագործակցության հեռանկարները, ինչպես նաև մագիստրոսներին դասավանդվող «Հողերի որակի մշտադիտարկում»

առարկայի տեղայնացման գործընթացի պահանջներն ու առանձնահատկությունները:

- Տնտեսագիտության, ճարտարագիտության, հասարակության և բիզնես կազմակերպությունների դեպարտամենտ այցի ժամանակ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դասախոսներ Լիլիթ Սահակյանը և Գևորգ Տեփանոսյանը հանդիպել են դոցենտ Անդրեա Պետրոսելիին: Դոցենտ Պետրոսելին ներկայացրել է ջրամատակարարման մեթոդները և մեխանիզմները, իր փորձը ջրային ավազանների կառավարման ոլորտում: Ապա Լիլիթ Սահակյանը և Գևորգ Տեփանոսյանը ներկայացրել են Էկոկենտրոնի շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնում իրականացվող հետազոտությունները՝ ուղղված գետի ջրերի որակի, աղտոտման մակարդակի և պոտենցիալ ռիսկերի բնապահպանական մոնիտորինգին: Համաձայնություն է ձեռք բերվել՝ հետագա համագործակցության և համատեղ նախագծերի իրականացման ուղղությամբ:

ա.գ.թ. Լիլիթ Սահակյան



կ.գ.թ. Գևորգ Տեփանոսյան



29.05.2019թ.